

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

1967 թ. հոկտեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 25-ը Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արք. Մանուկյանի հրավերով տվել է հովվական այցելություններ Ֆրանսիայի և Անգլիայի հայ եկեղեցական համայնքներին:

Վերադառնալով իր կատարած այցելություններից իր թեմը, գեր. տ. Տիրայր եպիսկոպոսը 1968 թ. փետրվար ամսին ուխտավորաբար եղավ Մայր Աթոռ ս. Էջմիածնում: Այդ առթիվ փետրվարի 10-ին նա Վեհափառ Հայրապետին ներկայացրեց գրավոր մի զեկուցագիր ուղևորության մանրամասներով:

Այդ զեկուցագրից քաղվածաբար մեր ընթերցողներին ենք ներկայացնում որոշ տեղեկություններ կատարած հովվական այցելության մասին:

1967 թ. հոկտեմբերի 19-ին սրբազանը Բուխարեստից մեկնում է Փարիզ: Ճանապարհին, կարճ ժամանակով, վայրէջք է կատարում Վիեննայում, ուր նրան դիմավորում է տեղի հայ համայնքի հոգևոր հովիվ հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը: Փարիզի օդանավակայանում սրբազան հայրը դիմավորվում է և առաջնորդվում Փարիզի հայոց առաջնորդանիստ ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ուր իր աղոթքը կատարելուց հետո նրան ընդունում է գեր. տ. Սերովբե արք. Մանուկյանը: Ողջույնի և բարի գալստյան խոսքերից հետո երկու սրբազանների միջև տեղի է ունենում զրույց ջերմ և հաճելի մթնոլորտում:

Կիրակի, հոկտեմբերի 29-ին, Փարիզի ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում գեր. տ. Տիրայր եպիսկոպոսը ս. պատարագ է մատուցում ի ներկայության հոծ բազմության, որոնք լսելով ս. Էջմիածնի միաբան եպիսկոպոսի այցելությունը, շտապել էին քաղաքի տարբեր ծայրերից աղոթելու և լսելու այն պատգամը, որն իրենց էր բերվել Մայր Աթոռ ս. Էջմիածնից և Ամենայն Հայոց կաթողիկոսից:

«Հայր մեր»-ից առաջ գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը հավատացյալներին է ներկայացնում Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդին, որից հետո հյուր սրբազանը Ամենայն Հայոց Հայրապետի և իր ողջույնի խոսքերն է ուղղում ժողովրդին ասելով.

«Էջմիածինեն ողջույն բերել, կնշանակե ողջույնը բերել դարերուն, որոնք անցած են իր կամարներու տակեն բովանդակ հայ ժողովրդի պատմության հետ, բերել ողջույնը այն սիգապանծ լեռան, որ դարերե ի վեր կհսկե հայրենի հողին. ինչպես և ողջույնը բերել նույնինքն վերածնված հայ ժողովրդին, որ կտքնի այս պահուս այդ հողին վրա նոր հայրենիք մը ստեղծելու համար:

Ինծի համար մեծագույնն է երջանկությունն երուն բերել ողջույնը նաև մեր Վեհափառին ուղղված հայ սփյուռքին, հիշեցնելու համար անոր հոգեկան կապերը, որ զայն կմիացնեն Մայր Աթոռին»:

Նոյեմբերի 2-ին համաձայն գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսի նախօրոք կարգադրության տ. Տիրայր եպիսկոպոսը մեկնում է Լիոն, ուր կայարանում նրան դիմավորում է տեղի հոգ. հովիվ հոգ. տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը: Լիոնում ապրում են շուրջ 5000

հայեր: Տեղի հայոց ս. Հակոբ եկեղեցում սրբազանը պատարագում և քարոզում է:

Նոյեմբերի 4-ին սրբազանը լինում է Դեսին քաղաքում, ուր ապրում են շուրջ 2000 հայեր: Դեսինի հոգևոր հովիվն է արժ. տ. Վարագ քահանա Ավագյանը: Նոյեմբերի 5-ին տ. Տիրայր եպիսկոպոսը տեղի հայոց ս. Հակոբ եկեղեցում մատուցում է ս. պատարագ և քարոզում «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն յուսոյ» բնաբանով:

Մարսելում սրբազան հորը դիմավորեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ գեր. տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը, տեղի հոգևոր հովիվ հոգ. տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը, եկեղեցական վարչության և հայ համայնքի ներկայացուցիչներ:

Մարսելում գերաշնորհ սրբազանը մնում է երկու շաբաթ՝ պատարագելով և քարոզելով տեղի ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցում և ս. Թադեոս եկեղեցում: Նա հնարավորություն է ունենում նաև ծանոթանալու քաղաքի տեսարժան վայրերին:

Լիոնի հայոց ս. Հակոբ եկեղեցին

Սրբազանը այդ օրերին այցելում է նաև Փոն դը Շերրի գյուղաքաղաքը, որտեղ ապրում են շուրջ 800 հայեր և ունեն փոքրիկ մի մատուռ ս. Գրիգոր Լուսավորիչ անունով, որի հոգևոր հովվությունը նույնպես վարում է արժ. տ. Վարագ քահ. Ավագյանը:

Նոյեմբերի 8-ին տ. Տիրայր եպիսկոպոսը մեկնում է Վալանս: Այստեղ հայերի թիվը բավականին մեծ է՝ մոտ 2500 հոգի: Տեղի հոգևոր հովիվն է արժ. տ. Նարեկ քահ. Վարդանյանը:

Համաձայն նախօրոք ճշտված ծրագրի սրբազանը նույն օրը հասնում է ֆրանսահայության ամենամեծ գաղթօջախը՝ Մարսել, ուր ապրում են ավելի քանի 40000 հայեր:

Նոյեմբերի 15-ին սրբազանը մեկնում է Նիս, ուր մնում է երկու օր: Նիսը իր շրջակայքով ունի մոտ 1200 հայեր, որոնց հոգևոր հովիվն է արժ. տ. Ատոմ քահանան:

Նոյեմբերի 17-ին վերադառնալով Մարսել, տ. Տիրայր եպիսկոպոսը Հ. Բ. Ը. Միության սրահին մեջ կարդում է դասախոսություն՝ «Ռումինիո և Բուլղարիո հայ թեմերը երեկ և այսօր» նյութի շուրջ:

Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը Մարսելից վերադառնում է Փարիզ Գրենոբլի վրայով:

Դեկտեմբերի 3-ին ս. պատարագ է մա-

տուցում ս. Պողոս-Պետրոս եկեղեցում:

Փարիզում եղած ժամանակ սրբազանը այցելում է Դպրոցասեր աղջկանց գիշերօթիկ ամենօրյա դպրոցը, ուր նրանց ուղղած իր խոսքի մեջ հորդորում է շարունակել ապրել որպես հայ:

Այդ նույն օրերին սրբազանը այցելում է նաև հատնի հայագետ պրոֆ. Ֆեյդիին՝ Սերովբե արքեպիսկոպոսի հետ միասին:

Դեկտեմբերի 10-ին գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոսը հրաժեշտի ս. պատարագ է մատուցում առաջնորդանիստ ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում և արտասանում իր հրաժեշտի խոսքը՝ շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով առաջնորդ սրբազան հորը, ազգային-եկեղեցական վարչություններին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբան եպիսկոպոսի հանդեպ ցույց տված սիրալիր ընդունելության համար:

Սրբազանը Լոնդոնի հայրապետական պատվիրակ գեր. տ. Պսակ արքեպ. Թումայանի հրավերով Փարիզից մեկնում է Լոնդոն: Օդանավակայանում նրան դիմավորում են տ. Պսակ արքեպիսկոպոսը և ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ, Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Տ. Տիրայր եպիսկոպոսի այցելությունը Լոնդոն համեմատաբար ավելի կարճ էր: Այստեղ նա ս. պատարագ է մատուցում Ամենայն Սրբոց նոր եկեղեցում և քարոզում՝ հուզելով և խանդավառելով ժողովրդին: Քարոզի ժամանակ սրբազանը հանդիսավորապես տ. Պսակ արքեպիսկոպոսին է հանձնում Մայր Աթոռից, Ամենայն Սրբոց եկեղեցու համար Վեհափառ Հայրապետի կողմից, ուղարկված ս. Սեղանի վեմ-քարը:

Հաջորդ կիրակի սրբազանը ներկա է լինում պատարագի ս. Սարգիս եկեղեցում, և իր քարոզում հավատացյալներին հաղորդում Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը ընդունվում է նաև Քենտրբերիի արքեպիսկոպոսի կողմից Լամպետ-Փալասում:

Դեկտեմբերի 22-ին Հայ Տուն դահլիճում սրբազանը կարդում է դասախոսություն՝ «Ռումինիո և Բուլղարիո հայ թեմերը երեկ և այսօր» թեմայով:

Դեկտեմբերի 25-ին գերաշնորհ սրբազանը Փարիզի վրայով վերադառնում է Բուխարեստ՝ իր հետ տանելով անջնջելի տպավորություններ Ֆրանսիայի և Անգլիայի հայ գաղութներից:

Գեր. տ. Տիրայր եպիսկոպոսի այս հովվական այցելությունները եղան արդյունավետ, շինիչ և մեծապես գնահատվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Խմբագրությունը Մայր Աթոռի միաբան երիտասարդ սրբազանին մաղթում է նորանոր, հոգեշահ հաջողություններ: